ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2026 թվականի N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 27-Ն հրամանի 11 կետով. ***Որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում 2026 թվականի մարտի 11-ին անցկացնել համայնքային ծառայողների թափուր պաշտոնները համալրելու համար հետևյալ մրցույթները.
1) աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության, սոցիալական աջակցության և տուրիզմի բաժնի պետի (2.1-2)՝ ժամը 10:00-ին,
2) աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության, սոցիալական աջակցության և տուրիզմի բաժնի առաջին կարգի մասնագետ (3.2-5)՝ ժամը 11:30-ին,
3) աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իրավաբանական առաջին կարգի մասնագետ (3.2-6)՝ ժամը 13:00-ին:
2. Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանին՝ կազմել մրցույթների հայտարարությունների տեքստերը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:
3. Մրցույթների անցկացման համակարգչային աշխատանքների պատասխանատու նշանակել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Աիդա Սարգսյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. փետրվարի 11
գ. Փարաքար